

ԱՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր
Տարեկան	6 "
Վեցամսեայ	15 "
Մասնատարեկանի համար	8 "

Սանկտպետրի համար	3 սր.
Տարեկան	1.50 "
Վեցամսեայ	

Դանուշիկի սօղոյ առաջին կողմէն համար 40 ս. իսկ վերջին կողմէն համար 20 սանկտպետրի կ. կողմէն առաջին կողմէն համար 20 Օյո գեղջ կրչայ:

Վասնայի համար ձեռք 40 սանկտպետրի

ՇԱՐՋՈՒՄ

ՐՈԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՈՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

Նամակ և գրամ որդեկուրացուցիական համարները

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտատպագրութեան համար
ձեռք
(20 ՍԱՆԿՏՊԵՏՐ)
Պուշկարիոյ համար
ձեռք
= 15 ՍԱՆԿՏՊԵՏՐ)

Գրութեան և ձեռք տրուի

«ՇԱՐՋՈՒՄ»-Ի ԲԱՍԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅԱՆ ԲԱՍԺԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԻ

ՄԱՅՈՒՆ ՊԱՏԻԺ

Պոլսոյ մեղրանակն կոմիտէի վճարող Պուրկազի 28 սնտուկ զէնքի դործին մէջ գլխաւոր յանցաւոր ճանչցուած և գատապարտուած Կարապետ Մարտիրոսեանը սեպտեմբեր 15-ին թափառելով Գալիպոլիսի մարտիկներու շարքին մէջ, Տեոփուստը ազատ է:

«Գրութեան»

ԲԱՂՍԲԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլիոյ միջամտութիւնը Միւրց շիբէկի ժողովին մէջ ստիպեց երկու պատմութիւնները ազգու միջոցներ ձեռք առնել: Չինովիէվ, Ռուսիոյ գեապանը, իրեն տրուած վերջի ունկնդրութեան միջոցին խիստ լեզու բանցուց Սուլթանի գէմ, որը պատասխանեց աւելի խիստ: Այնպէս որ այդ տեսակցութիւնը սաք վիճարանութեան մը յանգեցաւ:

Ռուսիա կը ջանայ հիմա Պալատներու մէջ խաղաղութիւնը վերահաստատուած տեսնել, որովհետեւ ծայրագոյն արեւելքի մէջ իրեն համար ստեղծուած է այժմ բաւական փափուկ դրութիւն:

Ճարտարապետ հանդարտեցուցիչ և խռովայոյց լուրեր իրար կը յաջորդեն, Ռուսիա կուզէ չինական ծովը և Բոսնիան նուաճել, Ճարտար կը դիմանայ, Անգլիա կ'աջակցի իրեն Ռուսիոյ նպատակները խաչաձեւելու համար: Կը պատիւ պատերազմի շջուկներ: Ռուսիա պիտի աշխատի առաջին անգամ Մանչուրիան իրեն համար սպառնալի, յետոյ զբաղի նաեւ մակեդոնական հարցով, առ այժմ հոս պէտք է լուրթիւն տրի: Չինովիէվ ներկայացաւ Սուլթանին և հիմնուած է երոպացի հիւպատոսներու տնօրէնութեան վրայ, պահանջեց որ թուրք չինուորներու

խճողութեան վերջ մը տրուի: Յետոյ շոշափեց Միւրց շիբէկի վեհապետական խորհրդակցութեան որոշումները և յայտնեց, որ բարենորոգմանց վրայ պիտի հսկեն երկու պետութեանց հիւպատոսները: Սուլթանը այդ հսկողութեան մէջ տեսնելով իր միահեծան իշխանութեան խախտուիլը կատաղեցաւ ու փրփրեցաւ:

Չգեներ կարմիր պաշտօնը պահ մը իր փրփուրներու մէջ և դիտենք զրութիւնը Մակեդոնիոյ մէջ: Հոն անցեալ շաբթու տեղի ունեցան յեղափոխականներու և զօրքերու միջեւ կատաղի ընդհարումներ: Մանսաթի շրջակայքը արիւնը հոսեցաւ գետի պէս: Երկու կողմերն ալ ունեցան մեծ կորուստներ: Ի հարկէ այս միջոցին ազգաբնակչութիւնը ոտնակոխ եղաւ և կը գտնուի այժմ մեծ սարսափե մէջ: և ապտամբ քաղերը դեռ չեն յոգնած կռուէն: Երբքին կազմակերպութիւնը կը յայտարարէ, որ հարգուկային կռիւները պիտի շարունակուին նաեւ ձմեռը, սակէ վատ խրտուսներ յառաջ եկան նաեւ Օսթիէնէկրօի սահմանին վրայ:

Այս ուղեւորներուն մէջ գրութիւնը երթալով կը փափկանայ և պետութիւնները համոզուած են, որ առանց երոպական հսկողութեան թուրք պաշտօնները անկարող են բարենորոգումներ մտցնել ու երկիրը խաղաղեցնել: խիստ դիմումները ըրին Սուլթանին և պահանջեցին ճանչնալ երոպական հիւպատոսներու հսկողութեան իրաւունքը: Սուլթանը կը գտնուի հիմա բաւական նեղ դրութեան մէջ: Շատերը կը կարծեն թէ նա իր մտադրութեան մէջ պիտի մնայ յամառ և ի պահանջել հարկին պատերազմ պիտի հրատարակէ Ռուսիայի դէմ:

Նայինք աղուէսը հիմա ի՞նչ պէս պիտի ազատէ իր օձիքը: Ահա այսպէս Մակեդոնական

հարցը լուրջ կերպով կը զբաղեցնէ երոպական դիւանագիտութիւնը, և այս ո՛չ անոր համար, որ Մակեդոնացիք ժողովներ սարքեցին, գիրքեր հրատարակեցին, այլ անոր համար, որ մակեդոնացիք քաջի պէս դուրս եկան կռուի: Ուր մնաց հայկ. հարցը, ի՞նչ եղաւ զժբախտ Հայաստանի վիճակը: Մեր խնդրի շուրջը կը տիրէ լուր թիւն և մենք այսպէս մոռացութեան մէջ պիտի մնանք մինչեւ որ մակեդոնացիներուն պէս դուրս չի գանք կազմակերպուած կռուի: Իսկ այս կը պահանջէ աշխատանք ու զոհողութիւն... Մակեդոնիոյ կենդանի օրինակը մեր առջեւն է... Ուրեմն նոր ոգեւորութիւն, նոր եռանդ և յառաջ գէպի յեղափոխական կազմակերպութիւն...
Մարգարէտներ

ՀԱՅ ՄԱՅՐ ՄԸ

Այս ողբերգական վայրկեանին, երբ ոռու կառավարութիւնը մեր հինաւոր զանքերուն ու եկեղեցիներուն անձեռնմխելի ինչքերը հրապարակաւ գողնալ փորձելէն վերջը՝ այսօր սուրբներով կը յափշտակէ, երբ տրուած հայրերուն քով հայ մայրերը կուլան, իսկ որդիները իրենց դիակները կը փռեն կողակներու վաշտերուն առաջ և հայ կղերն ալ Սիրիոյ կաքսորութեան հաւաքուցի աղանատես — վկայ թիֆլիզցի հայ մայր մը — «այրի տիկին Աննայ Աւետիսեանց», որ ինքնակամ իր խցանի գործարանը այդ գող կառավարութեանը կընծայէ «Երսնի», հազար երանի թէ այդ կիներ բնաւ ծնած չըլլար և կամ պոռնիկ մը եղած ըլլար ու կիանքի երկաթէ գարշապարներուն տակ տրորուած: Ա՛խ, այսքան ազգային ինքնասիրութեան պակաս, անկարելի է նոյն իսկ հրէաներու մէջ գտնել: Քստիւնի ճարտարէն յետոյ, երբ մեր հարիւրաւոր որբերը

արտասահմանի մէջ գերիներու պէս վաճառքի հանուցան, երբ ողորմելի որբանոցներուն մէջ պատսպարուածներուն համար հրապարակային մուրացկանութեան ձեռնարկուեցաւ ու կը շարունակուի, երբ վերջապէս թիֆլիզի փողոցներուն մէջ վանայ, Մշոյ, և Ալաշկերտի որբերը կեղտերու մէջ կը թաւալին, որբերգործ տիկին Աննա Աւետիսեանցը չը մտածեց իր գործարանը, ուր 10-15 տարեկան տղաներ կրնան աշխատիլ հայ որբերուն նուիրել, «բարեգործ» տիկին Աննան, որ մայրութեան ու յիւրեանի կնիքները տեսնելէ զատ հին հայ կիւն մըն է, որուն համար գոնէ կրօնական զգացմունքը նուիրական ու անոր դիպչողն ալ անհաշտ թշնամի մը պիտի ըլլար: Կը մնայ որ «բարեգործ» տիկին Աննային անշահախնդիր հայ կղերը հրաժարուի թաղել ու հայ գերեզմանոցն ալ զլանայ թիզ մը հող տալ, թո՛ղ ոռու քահանան թաղէ զայն և ոռու գերեզմանոցին մէջ փոսի մը տեղ խորան մը ունենայ իր ոսկորներուն համար:

Անշուշտ տիկին Աննան՝ չարժէր այսքան ուշադրութեան, սակայն այս սգաւոր օրերուն մէջ այնքան հրեշային է այդ Երեւոյթը, որ մարդ չի կարող նորապէս չզայրանալ:

Մեր եկեղեցիներուն ինչքերը յափշտակելով չէ անտարակոյս, որ մեզ պիտի ոռուսացնեն կամ ազգասպանութեան մղեն, ո՛չ, այլ մեր ազգային ինքնասիրութիւնն ու պարտաճանաչութիւնը խեղդելով, երբէ՛ք յանկարծակի չգանք, եթէ վաղը հայերու սեփական ստացուածքներն ալ գողնան կամ բռնի խլեն: Միայն շիջողները որ մեր ազգային ինքնասիրութիւնը խլեն, և առիկա մեզմէ է կախուած: Գրթոտ մօր մը պէս գուրգուրանք անոր վրայ և մեր մահով միայն թողնենք որ զայն մեղմէ խլեն: Որովհետեւ ազգային ինքնասիր

ընթացումը ճնշում է և ստրկացած
ցեղերը համար գնդակ էն ու
ուսման անելի ուժեղ զենք մըն
է ։ Եւ ստրուկը երբէք կորած չէ
քունի այդ զենքն ունի իր ձեռ-
քին ։

Թող մարդասպան ու գող թագա-
կիրները արեն ու թալանեն Հա-
յաստանը ու հայութիւնը , թող
ամբողջ հայութիւնը թիզ մը հող
վարելու և փշուր մը հայ ուտե-
լու չունենայ , սակայն եթէ լուի-
ազգային ինքնասիրութիւնը ա-
նարատ մնայ , այն ժամանակ ա-
նեղկայան է որ հայը իր ժրջա-
նութեամբ , աշխատութեամբ և
ընդունակութեամբ օր մը Հայաս-
տանի աներակներուն վրայ կարճ
ժամանակի մէջ նոր ազատ Զուր-
ցերիա մը պիտի ըստեղծէ իր
վիլլաներով , բանկերով ու քա-
ղաքակրթական բոլոր յարմարու-
թիւններով ։

8 Հոկտեմբեր 1903
Վանա

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԿՈՒՍԱՆ

Ռուսիոյ եկեղեցական կալուածնե-
րի գրաման լուրը հասած գիշերը
պատմում են , որ Հայրիկը ամբող-
ջովին չի քնում , զնում է պարտէզ ,
բարձրանում վեհարան , շարու-
նակ ծխում , Հեռուեալ օրը Հայրի-
կը գնում է Բիւրական ու դատ-
նում , յետոյ Վաղարշապատից նորից
վերադառնում է ու դրանից վերջը
մնում է անյայտութեան մէջ , Ոչ ոք
սեղը չի գիտեր , սկզբում ինձ ասա-
ցին որ կորիւնն էլ է հետք գնացած .
միայն վերջին օրերումս իմացայ , որ
միտակ է եղել և հետը ունեցել է մի
հրացան ։ Հետաքրքիրներին բու-
ւականութիւն տուած լինելու համար
գրում եմ Վաղարշապատից եկողներ
պատմածները , Սկսում են ժողովել
զանազան հայաբնակ վայրերից պատ-
գամաւորներ , թուով 60 հոգի , Հայ-
րիկը չի կայ ու չի կայ , Սինոզի պր-
եզիդենտը գալիս է էջմիածին , Սիմե-
օն Վարդապետեանց իր տանը ճաշ է
հրաւիրում նրան , Արիստակես

ԲԱՆԱՍԻՐՎԱԿՈՆ

ՀԱՅԿ ԻՍՏԵՂԱԿՆԵՐՈՒԿԸ ԵՒ ԱՆԻ

(Շար. Եսիտոյ քիւնէն)

(Ճանապարհորդական Անիտագրքի
Տօք. Բօրքախի)

Բաժանման ժամը եկած էր , Մենք
կառքէն վար իջանք եւ երկրին սո-
վորութեան համեմատ երեք անգամ
իրարու երեսը համարեցինք . յե-
տոյ ես ելայ քահանային կառքի վը-
րայ եւ անոր ղրով տեղ բռնեցի . նա
խոստացած էր ինձ մինչեւ Անի ըն-
կերակցիլ , կառքապանը սկսաւ ձիերը
փոզեցնել , պէտք էր այն օրը դեռ
կառքի ձիէն հասնիլ ու հոն գիշերելու
Երթալով տեսարանները փոխուեցան ,
չաչտերը աներեւոյթացան , ճամբան
սկսաւ բարձրանալ եւ խորք ու բոր-

Դաւթեանց եպիսկոպոսին և
Շախեան Աչոս վարդապետին ,
Պրոֆուրորը սկսում է ման-
րաման բացատրել կառավարչութեան
հիմնարկութիւններով կառավարելու
օգտաւէտութիւնը , երկուսն էլ հա-
ձգում են , խօսք են տալիս ստո-
րագրելու , Հեռուեալ օրը իմանում են
գիւղացիք . Վաղարշապատից և Եղ-
ւարդից սպանալիքներ են տեղում ,
Այս միջոցին տեղի է ունենում մի
ծիծաղելի բան , երբ Աչոսին սպա-
նալիք են տալիս , սա ասում է թէ
տեղակալը 20 հազար ռուբլի տւելի
եթէ աքսոր էլ գնալու լինի կապիլ ,
իսկ ինք փող չունի , ինչով պէտք է
ապրի , Ահա թէ ինչ է նշանակում
ձրիակեր լինել . որ աստիճանի պէտք
է բարոյական անկման մտտեցած լինի
մարդ , որ փողի համար իր համոզ-
մունքը ծախի : Այդ տեսակ գիւրա-
հարի բան են հաւատում , որը էջմի-
ածնի սրբութիւնները ծախել պատ-
րաստ է , եւ եթէ վերը անսէք մի
լաւ կացիւր չի կարի և դեռ իրեն
կրթւածի ու ինտելիկէնտի տեղ է
դնում : Վերջապէս երկու հոգու յա-
ղոզում է Կաթողիկոսին Սանահունում
զանել , ասում են Սէքսանգրոբօլ ,
քաղաքացիք լուրն ունում են ,
բայց ճանապարհ գնելիս անում են
այսպիսի մի բան . հէնց որ նստում է
վագօն , 5000 հոգու ամբողջ գոտու
պահանջում է դուրս գալ և բան թո-
սիլ : Կաթողիկոսը ինքից չի դուրս
գալիս , Մեսրոպ վարդապետի մօտից
մի քահանայ ժողովուրդի ուսերի վրա-
յից բարձրանում , բռնում է վարդա-
պետի մօտեքից և քաղքում ասելով .
« Դուք մեր տունը քանդեցիք » : Կա-
թողիկոսը հասնում է էջմիածին
անցեալ չորեքշաբթի , Երկու օր ա-
ռաջ յուլ . 28ին մեզ իւրանքանջիւր
եկեղեցում ինչորոշներ ատաղանցիցին
ստորագրելու Հայրիկի անունով , որ
նա միջնորդի թագաւոր կայսրի մօտ
կալուածները եկեղեցիներին թողնե-
լու : Հայրիկի գալով պրիւստրորը
գնում է մօտը , բայց որքան ձիւտ է
չեմ երաշխուորի , ասում են Հայրիկը
յետ է դարձնում , ասելով . « Բաւա-
կան է որքան խաբուցի , էլ ինձ
մօտ մի գարն » , Հայրիկը հետագ-
րում է առաջնորդներին գալ
էջմիածին ժողովի : Այս կիրակի (օ-
գոստոս 3ին) վճռել էի վաղ սուրճու-
կան գնալ էջմիածին կորիւնին տես-
նել , ատաստան քամի և ամպային
էր , խորհուրդ չը տեսնին զնալու ,

գերով զժուարանալ . մենք կը գրո-
նուէինք հիմա Արագածի անելի մօտ ,
որուն շրջակայքը ծածկուած են հրա-
քիտային լեռնէն դուրս ժայթքած
լավաի անպին զագուածներով : Այս
լեռան կազմութիւնը շատ հետաքրքիր
է : Արագած մարած հրաբուխ մըն
է , բայց ոչ Արարատի կամ անոր դը-
րացի լեռներուն եւ կամ Վէտովի
պէս սուր եւ կոնսան հրաժայթ գը-
լուիտով մը , այլ միջիտեւոր սարե-
ներ ատաղ հոն երկրի ներսէն միայն
հեղուկ լավա դուրս բղխած է անբաւ
զանգուածներով , որոնք չորս կողմ
հոսած եւ յետոյ ստոած են : Այս
հոտումը շարունակուած է երկար
տարիներ եւ միշտ ծածկած անելի
մեծ շրջագիծեր , այնպէս որ ժամա
նակի ընթացքով կազմուած է վա-
հանածեւ սափակ լեռ մը , որու բարձ-
րութիւնը սակայն անցած է 4000
մեթրը : Այս պատճառով Արագածի
վարի մասը այնքան մեծօրէն չաղքե-

որովհետեւ կիւրակի օրերը կառք չի
լինում , ես վերջապէստով պէտք է
գնայի , այն էլ անձրեւ ու քամիին
չէին թողու , գնալիս բազար և վերա-
դարձայ տուն , տանը հիւր ունէինք ,
էլ առնից դուրս շեկայ , Պոր եկեղե-
ցու զանգակների ձայնը գայիս էր ,
հարցրինք , ասացին Մուրատեան ե
պիսկոպոսի հոգեհանգիստ են կատա-
րում : Ճաշից յետոյ ժամը 4 էր ,
դուրս եկայ թուլ վար և լսեցի մի
բան . նոյն եկեղեցուց ժամի
11ին պատարագը դուրս գալուց ան-
բոխը շրջապատում է Սուքիասին ,
պահանջում է գնալ էջմիածին , Աս-
քիաս նախ հրաժարում է , ապա նա-
տացնում են բաց կառք և շրջապա-
տում մօտ 1500 մարդ , ուստի
գոտալով անցնում են պոլիցայի և
նահանգապետի տան առաջից լինու
փողոցը քարերու պատճառով արդի-
ուած է անցուղաբար , մի պրիստալի
օգնական ուզում է կանգնեցնել ,
դրան խփում են , ով պատահում է
քարը են տալիս տանում , նոյն իսկ
ատրճանակով սպանում : Այդ լինելը
վերջանալու տեղում (սարսնից յետոյ
գնացող վերադարձողների պատճառ-
քն է) ոստիկանութիւնը փորձում է
ոստիկաններով հոսանքի առաջը փա-
կել , ճար չի լինում , դրանց միա-
նում են նորգաւթի և Փարաքարի
գիւղացիք , էջմիածնի պահակաւոր
մօտ նորից փորձ են անում 20 զին-
ւորով և ոստիկաններով , գիւնների
վրայից հրացան արձակում , ոչինչ չի
օգնում , այդքան ամբողջ ոտքով շը-
րջապատած եպիսկոպոսի կառքը գո-
տում գոչուժով առաջ է գնում : Վա-
ղարշապատից մի 400 հոգի էլ գալիս
են առաջ , գրոհ են տալիս , մտնում
ճեմարանով և միւս դռներով վանքի
բակը , անելի ժողովուրդ է լինում
քան միւսօր օրնուսթեանը , սեղծ ձը-
գելու տեղ չի լինում , քարերով վի-
րաւորում են ոստիկաններին և էջմի-
ածնի գաւառապետին , սարսափելի
գոտում գոչում լինում է վանքի բա-
կում , վերջապէս Հայրիկը գալիս է
լուսամուտի առաջ , օրհնում է ժո-
ղովրդին և ասում է մօտաորակէս
հետեւեալը . « Եթէ դուք սիրում էք
մեր եկեղեցին ինչու՞ մինչեւ այժմ
չէիք ժողովում , այն յիմար վրացին
ինձ կըսէ ստորագրիր , անոր վտան-
ցի , դուք սողոթեցէք որ Հայրիկը մի
քանի տարի ալ ապրի , ան չի տայ
կալուածները , մեր կայսրը ողորմած
մարդ է , նա կը լսէ մեր խնդիրը .

մարդուս վրայ , բայց հոյակապ է ա-
նոր գագաթը , որ չորս պատածեայ
հսկայ դուխներով կը ձգտի երկնյի
կապոյտին հասնիլ եւ որը ծածկուած
է յաւիտենական ձիւնով : Լեռան
մակերեսովին վրայ տեսանելի են
լավաի լարի բոնդոսական հոսանք-
ները , որոնք իրարու վրայ կուտա-
կուած ու ստոած են , Գարեբու հողմերը
ծեծած եւ լուծած են մակերեսովին
մեծ մասը , բայց կան նաեւ թարմ
և Ծանաչելի գիծեր :

Լեռան վարի մասին վրայ չինում
է էջմիածին—Ալեքսանդրօբօլեան ճա-
նապարհը , որ բոլորակաձեւ կը դաս-
նայ լեռան շուրջը եւ կերկարի դէ-
պի արեւելք : Արագածի արեւելեան
կողմը կը բարձրանայ մի անելի ցած
բայց շատ ձիւ լեռ—Արա-Դաւ , նոյ-
պէս հրաբխային մի կողմ զանգուած
Արա-Դաւային բղխած լավան միանալով
Արագածի հոսանքներուն հետ կաղ-
ւած է մի երկար կոնակաձեւ ըլլոր ,

թող գան առաջնորդները ժողովին ,
պատգամաւորներ կուղարկենք կայ-
սեր յօտ , կաղաչենք , որ այդպիսի
բան չանի : Միամիտ կացեք .
Հայրիկը չի տալ և այլն , Երեկոյեան
հասնում են զինւորներ , գալիս են
վեհարան Հայրիկին պահելու համար
և 4 խոռվարսի բռնած են լինում ,
ամբողջ պահանջում է հեռացնել զօր-
քը և ազատել , 4 հոգուն , զօրքը մը-
նում է պարսպից դուրս 4 հոգին ար-
ձակվում են : Տեղի ունեցան ստրաժ-
նիքների , զինւորների և ամբողջ
մէջ ընդհարումներ , բարձրը քան-
րով վնասում է նրանց , Այսօր ասում
են որ Ալեքսանդրօբօլեցի որք
վագան կրնաներ են գալիս եղել վեր-
ջին վագոններով : Անի կայսրանում
գնացքը գալիս է Երեւան իսկ այդ
երեք վագոնը մնում է կանգնած ,
ասում են որ այժմ ոտքով են գալիս
Արարատով և մեծ թուլ :

Այժմ քաղաքումս բաւական թուով
կիրակի օրուայ իրողարարներից
բանտարկուած են և բանտարկում են
դեռ , Ալեքի մեծ թուով բանտարկ-
ւածներ կան Վաղարշապատում : Այսօր
էլ ասում են կանչելու տեղ նշանակ-
ւած է Գանձակի ուսում . Ինսպեկտոր
Խօակիմովը :

Նայինք ինչով կը վերջանայ :

ՆԱՄԱԿ ԲԷՂԵՆԱՅԷՆ

Անձնական գործով մը Բէղվնա հան-
դիպեցայ , ուր 1-2 օր մնալով ուսում
նասիրեցի տեղուց հայութիւնը , ո-
րոնց թիւը 15-20ի կը հասնի և ո-
րոնք բոլորն ալ իրենց համեստ գոր-
ծը ունին : Մասով իմացայ սակայն
որ անոնց մէկ մասին մէջ կը տրե-
ստակալի հայտնակու թիւն , որը շտ
ծայրայեղութեան հասած ըլլալուն
համար կառավարութիւնը ստիպուած
է միջամտել . այս տեսակ անհասոյ և
սնպատուարի ընթացքներ ոչ միայն
հայ անունին սրտու կը բերեն , այլ
ընդունին ալ տիրող կառավարութեան
աչքէն կրնան , ինչպէս քանի ան-
պամներ արդէն ըստած է թէ՛ վա-
ռավարութիւնը ձեռքով պիտի գրա-
ղեցունէք . ներկայովս խորհուրդ
կուտայի այդ պարտնենրուն , որ մի
քիչ գիտնային ազգային արժանա-
պատութիւնը բարձր պահել :

Այս ցուալի իրողութեան հետ մէկ
տեղ կայ և մի ուրախալի երեւոյթ :

որու վրայն կանցնի ճարման , Եր-
կար ատեն կը գորուէր մեր կառքը
ղէպի առաջ . մեր ձախ կողմը կը-
բարձրանար Արագածի պատտուած
եւ ժայռու գլուխը , որը իր կուրծ-
քէն վեր դեռ թաղուած էր ձիւնի
մէջ , ալ կողմը Արա-Դաւ սեւ ու
մուսլ տեսքով :

Շատ հետաքրքիր է տեսնել Արա-
ծի ջրերէն կազմուած խոր ու լայն
ձորի մը պատկերը , որ փորուած է
լավայէ գետնի մէջ . ձորին մէջ կայ
գիւղ մը , համբաւաւոր իր արտադ-
րած պատուական զինիով . ըլլոր մո-
լոր ճամբով մը իջանք վար . գիւղին
քահանան մեզ երբ տեսաւ նշանը Ը-
րաւ , որ իր մօտ իջեալներնք—Գիւրը
այս կողմը կը նորունուի գետ իրբեւ
Աստուծա՛յ դրկուած մի պարգեւ :
Տէր հայրը մեզ տեղ ցուցուց սեւ-
եակի թախիբի վրայ , ուր բաւա-
կան զօրաւորութիւն քաշել վերջ
յաջողեցայ Ասիացիի մը պէս ծալա-

վերջերս այս տխուր իրողութեան վերջ մը ապու համար կարգուած է ազգատանամ ընկերութիւն մը, որոյ գոյութիւնը զգալի պէտք մըն էր, վասնզի յաճախ կը պատահէ որ անկարող ազգայիններ մէկ քաղաքէ մը սը ճամբորդեն:

Նոյնպէս կարգուած է մի ընկերութիւն, որուն նպատակն է Հ. Յ. Գաշնակցութեան միջոցաւ ներկականացնել օրինակ երկրի մէջ կուող յեղափոխականներուն: Մենք յարատեւութիւն մարտնչով կը ցանկանք որ այս ազնիւ քայլը համբարշտութեան հիմնաքար ըլլայ Բլէվնայի փոքրաթիւ հայ գաղթականներուն մէջ:

6 Հոկտեմբեր 1903
Բլէվնայ

Ճամբորդ

ԵՊԻՍԿՈՊՈՍԵՐՈՒ ԲՈՂՈՒՍԿԻՐԸ

Ճար. Ամստոյ քիւն

Իրեւս օրինակ ընտրելու Երուսաղիմէ կանխ երկրորդներուն մէջ եկեղեցական կալուածներու մասին եղած կարգադրութիւնները, բայց ճամբորտ չէ՞ որ սոյն կարգադրութեանց հեղինակները նպատակ ունին կրօնական սկզբունքները սկզբունքները եւ եկեղեցոյն կարեւորութիւնը պահպանել: Արդ ինչպէս միեւնոյն դիտողները վերաբերելու առեւտրական կայսրութեան ալ, որ միշտ հպարտացած է իր կրօնասիրութեամբ ու եկեղեցոյն հանդէպ իր հոգածութեամբ, եւ որ հաւատոյ ու եկեղեցոյն ախոյանն հանդիսացած է, զգուշանալով զայն ստորնացնող ամէն քայլէ, Անեկրթայ ենք թէ՛ ուսական հզօր կայսրութիւնը միեւնոյն ոգով ստորուած, եւ իր շնորհաբան շահանքը հետեւելով, պիտի ուզէ արգիլել մեր եկեղեցոյն ի վնաս եղած ամէն առաջարկ կամ գործողութիւն: Իր նախորդները արդէն այս մասին օրէնքներ հրատարակած են. անոնք սքաւորած են մեր եկեղեցոյն գոյութիւնը ու անոր բոլոր իրաւանց պահպանումը, ճաննալով, 1836 տարուայ կանոնադրութեան մէջ անոր հեղինակութիւնը իր ինչքերը կառավարելու վերաբերմամբ: Սոյն կանոնադրին թրգ յօդուածով անոնք յատկապէս ցուցած են որ ճշայ

լուսաբարձական Ռուսիոյ եկեղեցիները արտօնեալ են անշարժ կարեւորներ ստանալու, իսկ Պճրգ յօդուածին մէջ ապացուցած թէ Մինոզը կը կատարէ ճշայ լուսաբարձական եկեղեցիներու պատկանող ընչինք վարչութեան հսկողութիւնը: Սեփականութեան ու վարչութեան այս իրաւունքները ստացուած ու նուիրագործուած իրաւունքներ են, ու մեզի դժուար է հաւատալ որ ուսկայսրութեան հիմնական օրէնքները այնքան յեղափոխութիւն ու գոյի աշխարհի:

Այս իրաւունքներն աւելի ամուր և անշարժ են անոր համար մասնաւոր որ, խնդրոյ նիւթ եղող կալուածներն ու ինչքերը սեղանական նկարագիր չունին, եւ ոչ ալ անոնց սեփականութիւնն ու վարչութիւնը ուսական հոգին սահմաններուն մէջ ապրող Հայոց միայն յատուկ է: Անոնք գոյացած են նուէրներով ու հարստութեամբ բոլոր հայերուն, որք ի պիտու աշխարհի, և կրնանք ամենայն համարձակութեամբ ըսել թէ Պարսկաստանի, Հնդկաստանի եւ Օսմ մանեան կայսրութեան կարգ մը գաւառներու Հայերը ամենէն լայն մասն ունին հոն: Եւ ինչ հարկ ընդ երկար բացարձակութեանց մէջ մանեկ, երբ կայսրական օրէնքը ինք կը խօսի եւ 1836ի կանոնադրութիւնը իր 117-երորդ յօդուածով բացայայտօրէն կը խոստովանի ու կընդունի թէ շարժուող կամ անշարժ ամէն ինչք, որ հայ լուսաբարձական վանքի մը, եկեղեցոյ մը կամ բարեպաշտիկ հիմնարկութեան մը պահպանումին յատկացուած է, կը կառուցէ հայ լուսաբարձական եկեղեցոյն ամբողջութեանը սեփականութիւնը: Եւ չէր կրնար այլ կերպ ըլլալ. քանի որ վաղարշապատու Ս. Էջմիածնայ կաթողիկոսական Աթոռը ամբողջ հայ ուղղափառ եկեղեցոյն կեդրոնը կը ներկայացնէ: Բոլոր ուղղափառ հայ եկեղեցիներու գլուխը եւ գերագոյն պատրիարքարանն ու եպիսկոպոսարանը ուղղափառ հայ ժողովրդին, որ միակ մարմն մը անբաժան անժամանակն ու միակ ուղղափառ հայ եկեղեցոյն մը անբաժանելի մասերուն պէս կապուած է. անոր: Ուրեմն անհրաժեշտ է նկատողութեան անոնք այս պայմանները եւ օրինակներով ու տրամաբանօրէն անոնցմէ հետեւցնել որ կարելի չէր ու չէ տեղական տեսակետով վրայ կենալ մեր ուղղ

ղափառ եկեղեցոյն կալուածներն, ինչքերն, ստացուածքները ու եկամուտները արամազրբու եւ անոնց սեփականութիւնն ու վարչութիւնը կարգադրելու համար: Ձեր Սրբազնութեան շատ դիւրին պիտի ըլլար նաեւ դառնալ այն շրջանին ուր ուսական հզօր պետութիւնը ստալին անգամ ազքը նետեց Էջմիածնայ սուրբ Սթոնոյն վրայ, եւ յղձարով անոր բաղդին, գրաւեց երկիրը իբր պաշտպան մեր ուղղափառ եկեղեցոյն, ու մեր եկեղեցւոյն զաւակները իրենց ձեռքերը կարկռեցին անոր, իբր իրենց եկեղեցոյն եւ անոր իրաւունքներուն պաշտպանին: Ռուսիոյ վեհօրդի կայսրը, այդ շրջանէն ի վեր, միշտ միեւնոյն բարութիւնը ցոյց տուած են ու իրենց հայ հպատակներուն իրենց հոգատարութիւնը խոստացած, ինչ յայտարարութիւն որ ըրած են ամէն քրիստոնեայ ժողովուրդներուն ի նպատակ ի պաշտպանութիւն, նոյնը չեն գաղթած ուղղափառ քրիստոնեայ Հայերու համար ալ կրկնել: Ինչպէ՞ս հաւատալ որ հարածանքներն ու տառապանքները պիտի գան յանկարծ այն կողմէն, ուրկէ պաշտպանութեան ու հոգածութեան խոստումներ ընդունուած էր միայն, ինչպէ՞ս բոլոր եկեղեցիներու բարձրագոյն աշխատող ձեռքը պիտի կրնար ստորնացնել ու տապալել մեր եկեղեցիները: Ինչպէ՞ս եկեղեցական իրաւունքները պիտի սակաւէին ու ջնջուէին անոր ձեռքով որ ընդունած եւ քրտնալից է թէ պետական իրաւունքներէն ալ գերազանց են անոնք:

(Շարունակելի)

ԱՋԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Մարմում» ընթերցողներուն արդէն յայտնի է Աթէնքի Տ. Խորէն քահանային Գէօթէնէն մէջ ըրած շահատակութիւնները: Այս անգամ կրմանալով թէ նոյն քաղաքին հոգաբարձութիւնը կրկին յիշեալ քահանան, իբր թէ շինուելիք մատարան համար հանգանակութեան զրկեր է ի Հնդկաստան ու եթովպիա, և իր սյդ որոշումը հազարդեր է Պոլսոյ Պատրիարքարանին: Կրօ

նակա՞ն ժողովը ի պատասխանի յայտարարեր է թէ պէտք էր կանխաւ հաճութիւնն ստանալ էլ միածնայ ՎՊՏ. Կոթողիկոսին, զի վերոյիշեալ երկիրները անոր թեմերն են: Պատրիարքարանը կերեայ թէ կա՞մ տեղեկութիւն չէ ունեցած յիշեալ քահանային վերջին շահատակութիւններէն, և կա՞մ քաղութիւն չէ ունեցած ուղղակի արգիլել Տ. Խորէնքայ գաւառի հանգանակութեան մը ելլելէ: Երբեք արգիլելով սպահովարը նորէն պաքոսեան շրուայտութիւններ ու յոյժութիւններ պիտի կատարէ: Գալով մեզի, կը զարմանանք թէ Աթէնքի սյդ հոգաբարձութիւնը ի՞նչ նկատումով կրկին դրամ հաւաքելու կը զրկէ այնպիսի արարած մը, որուն խաչագողութիւններն ու կատարած շահատակութիւնները ուսականական վաւերաթղթերով հաստատուած են: Աթէնքի հոգաբարձութիւնը, նեթ չուզեր պապայտի մեղսակից համարուիլ յիշեալ Տ. Խորէնին ու ծանր պատասխանատուութեան տակ մնալ հաւաքութիւք գումարներուն համար, թող այժմէն քեզ բացատրութիւն տալու, և եթէ ամուր փաստեր ունի, թող ջրէ Տ. Խորէնի մասին գրուածները:

— Իշխան Կաթողիկոսի հրամանաւ Երեւանի նահանգի Ալէքսանդրապոլ քաղաքի մէջ մտցուած է խիստ պաշտպանութեան դրութիւն, արգիլուած են ժողովներ և հրապարակային համախմբումներ:

— Կ. Պոլսոյ պիտոյն պիտ թերթին մէջ կը կարդանք հետեւեալը, զոր նոյնութեամբ կարտատպենք.

«Վարնայէն բաւական ստորագրութեամբ գրութիւն մը հաստերէկ պատրիարքարան, որով կրկնուեն թէ առաջնորդական ընտրութեան մասնակցելու համար նոյն քաղաքէն ներկայացու

պատկ նստիլ, ինչ ներկայացուցան յետոյ երեցիկներ եւ իր որդեգիրը, ամսթիւսած բայց սիրուն մի ալլիկ: Ասոնք սեներակէն նորէն զորս քաջին մեզ համար գինի եւ հաւկիթիցէն ճաշ պատրաստելու: Այս միջոցին եւ զննեցի սենեակը. պատին վրայ կախուած էին փայտէ քանդակներ եւ վիմապիտիւր, գ. օ. կաթողիկոսներ, Էջմիածնի վանքը, սուրբ Մարտի, որու մօտ հրեշտակ մը հայկական տառերը ի ձեռնին, ճաշը եկաւ, անարատ կարաղի մէջ կարուած էին հաւկիթներ, բայց ոչ պատառաքող կերեւար, ոչ գանակ եւ պէտք էր ուտել. եթէ կտոր մը մի ըլլար սողեւեւեւ եւ քան մը կրնայի ընել, բայց ծուածեղով անոնք մնացի շուարած, ուրեմն ստիպուած էի գիտել երկու հայերու ուտելու կերպը եւ տեսայ որ գործը այնքան ալ դժուար չէր. անոնք հաւկիթը վերցուցին եւ լափաներու մէջ գե

անդելով սկան ուտել, եւ հետեւեցայ: Ճաշը եւ գինին փառաւոր էին: Մենք նուէր ստացանք նաեւ տիկ մը լիցուն գինի եւ զանեղելով կառքին մէջ ճամբայ կանք: Ճամբան երթալով աւելի դժուարացաւ. կառքը շայունակ կը թեքուէր մէկ կողմէն միւսը եւ կը հանէր այնպիսի ճարձատու մներ, որ կարծես թէ պիտի փլէր:

Մենք շատ անգամ կանգ առինք Հայաստանի հին օրէրէն մնացած եկեղեցական շինութեանց անոնք, ուրոնց մեծ նասը, դժբախտաբար աւերակ դարձած է այսօր. ասոնցմէ ամենէն գեղեցիկն է Ականաւանքի եկեղեցին, չիքուած Արա-Բասի կողքին, հրաբխային յատակի վրայ: Կառքը կանգնեցաւ վանքի քանդակներով գորգարուած մեծ ու փառաւոր գրան սաղեւ: Շինութեան ոճը գոյտ հայկական է եւ շատ սիրուն: Հայաստանի բոլոր անկիւ

ները ի են այսօրիւնակ շինութիւններով, որոնք թրգ դարէն մինչեւ 13րդ դարս ծաղկած ու այսօր գրեթէ աներակ դարձած են: Ականաւանքի մօտ կը գտնուի Պոլեի հին գիւղը, Ս. Գէորգայ եկեղեցիով, որ ուխտագնացութեան տեղ է. հոս կայ նաեւ կիսաերակ վանք մը, որու մէջ սակայն միայն ծեր վանական մը կը ընակի: Հայոց վանականները երբէք չեն նսնծիր կաթողիկ կամ յուսաբաւան վանականներու, միայն Էջմիածնի մէջ կան շատեր, բայց ասոնք կենցաղը հեռու է ճգնաւորական ըլլալէ: Էջմիածին (Հայ) եկեղեցւոյն կեդրոնն է եւ հոն գտնուող իւրաքանչիւր անգամ ունի իր որոշ պարտականութիւնը վարչական գործերու մէջ: Էջմիածնի Սթոնոյն, որ մէկ կը կառավարուի հայ եկեղեցին, ունի եօթը նոյնաներ բարձրագոյն կղերի Էջմիակայսրուցիներէն, նախագահը կաթողիկոսն է, Ռուս

կառավարութիւնը նշանակած է նաեւ իր կողմէ պրօկուրօր մը, որ հոն տեսակ մը լրտեսի պաշտօն ունի: Էջմիածնի ուխտէն կելեն կրթուած կղերներ, բոնք կը զրկուին ամէն կողմ պաշտօն վարելու: Սեւանի մէջ ալ, ուր կաքոսոյին յանցաւոր կրօնականներ կայ միաբանութիւն մը Ուրիշ վանքերուն մէջ կան միայն մէկ մէկ վարչապետ, որոնք պաշտօն ունին սուրբ վարքերը քայքայուէն ազատ պահել: Թրքական Հայաստանի մէջ վանական միաբանութիւններ դեռ շատ կը գտնուին: Հին Հայաստանը լի էր ծաղկած վանքերով, որոնցմէ շատերէն այսօր միայն աներակները մնացած են:

Շարունակելի

ցիւրի մը ընտրութեան մէջ անկանոնութիւններ եղած են, և կը թուեն ինը կէտեր, որոնց մէջ թերի կը գտնեն կատարուած ընտրութիւնը. Այդ պատճառով ընտրութիւնը, զեղծումները գտնուած ընտրութիւն պատճառներ են և ներկաները հրաժարեցին այդ ամօթալի քուէարկութեան մասնակցելէ, և մէկ մասը անմիջապէս բողոքագիր մը պատրաստելով ներկայացուցեր է ներկայ գտնուող Տ. Վահան Վ. ին, քուէտուփը բացուելէ առաջ, խնդրելով որ զեղծումները նկատի ունենալով, քուէարկութիւնը յետաձգէ, քանի որ ընտրողներու երեք քառորդը վերայիջեալ պատճառներով կը մերժէ մասնակցել. Յաւալի է ըսել կաւելցնեն, թէ Տ. Վահան Վ. գոնէ հաճութիւնը չէ ունեցած այդ հանրագրութիւնը ներկայ եղող ընտրողական ժողովոյ մնացած երեք անդամներուն կարգալու, և այսպէսով եղած բողոքի ձայնը լսելու. Այս առարկութիւնները արժանահաստ աղբիւրներէ կը հերքուին. յայտնուելով որ ներկայացուցիչ ընտրուած Գարբիէլեանի անձնական հակառակորդներն են որ այդ խնդիրը կը յուղեն, և թէ նախագահ Տ. Վահան Վ., ինչպէս նաեւ տեղւոյն Տ. Մարտիրոս և Տ. Մարգիս քահանաները, որոնք ներկայ գտնուել են, կը հաստատեն օրինաւորութիւնը ընտրութեան. Արդէն կեդր. վարչութիւնը եթէ այդ գիրը նկատողութեան առնէ իսկ, ինք չի բեկաներ կատարուած ընտրութիւնը, այլ Տ. Վահան Վ. ի նկատողութեան և դատողութեան պիտի յանձնէ, մինչդեռ Տ. Վահան Վ. ունէ անկանոնութիւն չէ նշմարած, և ընտրութեան մէջ շատ անաշուտութեան վարուած է. Հետեւաբար կեդր. վարչութեան համար աւելի նշանակութիւն չունին այդ գիտողութիւնները. աւելորդ ձանձրութիւն է մինչեւ այստեղ գրել, պէտք է տեղւոյն վրայ քննուին. Զարմանալի է որ ինը քաղաքներու մէջ անշուտ ընտրութեան ներկայացուցիչները, մինչ վառնայի մէջ բաւական խնդրոյ առարկայ եղաւ, թէպէտ կարեւորութենէ զուրկ կը համարուի.

— Տապալիզօնէն «Մշակ» կը գրեն հետեւեալը. «Մակեդոնական ապստամբութիւնը ուժաւորանալով Թուրքիայի առանց այն էլ քայքայուած տնտեսութիւնը, կառավարութիւնը սկսաւ եղած տուրքերը կրկնապատկել և նոր տուրքեր սահմանել. ոչխարի և այծի տուրքը 3ից բարձրացաւ 5 զրուշի, ձիի տուրքը 5ից 10 զրուշի. նոր տուրքեր գրուեցան, եզրի և կովի վրայ 10

զրուշի, ջորիին 5 զրուշի, էջին 3 զրուշի. Սա այնպիսի քայքայիչ տուրք է, որ այժմեանից դժուար չէ ենթադրել, որ կարճ ժամանակամիջոցում գիւղական հասարակութիւնները բոլորովին կը զրկվեն ընտանի կենդանիներէ. տասանորդի, զինուորական և այլն տուրքերը յայտնի են արդէն իրենց ծանրութեամբ, փոխանակ նրանց մեղմացնելու և գիւղական տառապող ժողովուրդը ազատելու սովածութիւնից, նորանոր անտանելի հարկեր են հնարվում և խստութեամբ գործադրվում. երեւի «Թէֆուր» են գրանք էլ. Թուրք սարուկ և ֆանատիկոս ժողովուրդն էլ ստատիկ յուզված է այս նոր տուրքերից, բայց անշուտ մտաւորները նրան կը հասկացնեն, թէ գեալուրներն են այս բոլորի պատճառը և նրա զայրոյթը կուղղեն դէպի քրիստոնեաները».

— Վերջին պահուստի խումբ մը հայերէ կողմ մը ստացանք, որ կողմը իր ցոյց տուած թույլ վարձուքին համար, որը աւելի պիտի շատնայ, եթէ նաչէվիչի առաքելութիւնը այս անգամ ալ ապարդիւն մնայ.

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Վիեննայի «Յայթ» թերթին մէջ կը կարդանք հետեւեալը. «Կողմաւոր հայերուն, որոնք հոս ապահով են թիւրք պաշտպանութեան հալածանքէն, կըսպառնայ հալածանք կողակներու կողմէ:

Եղիարէթուպօլի հայ կեկղեցական կալուածներու գրաւման միջոցին պատահեցան խոտովութիւններ, որոնց մէջ շատ հայեր մահը գրկեցին. Զոհերու թիւը մը աւելի տխուր հետեւանք ունեցաւ. Այս մասին հայ աղբիւրներէ կը քաղենք հետեւեալը.

«Պատարագը վերջացած է. քահանան և ժողովուրդը խաչերով և Աւետարաններով դուրս կուգան. Քահանան կերգէ տխուր շարականներ, նա կաղօթէ Գանձակի նահատակներուն համար, նահատակներ, որոնք հայութեան դատը պաշտպանելով ինկան. Ժողովուրդը բաց երկնքի տակ ծունկի եկած՝ իր կորստուած եղբորները և քոյրերը կողբայ. Պատիւը այնքան տխուր է, որ ամբողջ ժողովուրդը կը հեկեկա և արցունք վը թափէ. Յետոյ ոտքի կելլեն և ամենուն շրթունքներէն միաձայն կը թոփ. «Կեցցէ՛ հայաստան, կեցցէ՛ Ազատութիւն» աղաղակը: Ակնարկ մըն ալ դէպի նահատակներու հողակոյտը և ժողովուրդը կուգէ խաղաղ ցրուիլ ու տուն երթալ, բայց ոստիկանութիւնը սուրբ մերկացուցած կը յարձակի ժողովրդին վրայ. կողակները պատերու ետեւէն կրակ կընեն. Անգէն ժողովուրդը կուգէ պաշտպանուիլ և ճամբայ բանալ:

Օղբ կը լսուի վայնասուններով, տղամարդիկ քարերով կը կոռին, կանայք կը մարին, երկու կողմէն ալ շատ վիրաւորեալներ կան. Թիֆլիզ այսպէս բաներ շատ տեսած է և դեռ պիտի տեսնէ, որովհետեւ Գալիցիան

կոչուած գազանը չպիտի հանդարտի մինչեւ որ Հայերը բոլորովին իր լըծին տակ առնէ:

«Ռոսարուժիւնը այլեւս անօգուտ է մեզ կը հոչակէ հայ մամուլը: «Որքան մենք զիջումներ ընենք» — կըսուի հոն — անքան պիտի դժուարանայ մեր վիճակը, ուստի մենք կուր կը հրատարակենք միաբան և հաւաքական ոյժերով:

Ուրքի կանքնեցէ՛ք Հայեր, ալ բաւ է գերութիւն, մեր նահատակ քոյրերու և եղբայրներու արիւնը թող բորբոքէ աւ հրահրէ մեր սրտերը. յառաջ դէպի կոտոր գաշա, կոտորի՛նք յանուն մեր իրաւունքներու. յանուն մեր ազատութեան և յանուն մեր պատուոյն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխանի գէմ կը տիրէ զժգոհութիւն մակեդոնական խնդրի մէջ իր ցոյց տուած թույլ վարձուքին համար, որը աւելի պիտի շատնայ, եթէ նաչէվիչի առաքելութիւնը այս անգամ ալ ապարդիւն մնայ.

— Մակեդոնացի գաղթականներու վիճակը խորհրդածութեան առարկայ դարձած է Պուլկարոյ մէջ. Անոնց թիւը կը հասնի 20,000ի, որոնցմէ 13,000 եկած են Ադրիանապօլսոյ կողմերը և կը գտնուին Պուրկաղ, 7000ը եկած են մակեդոնիայէն և տարածուած են Քէօստէնտիլէն մինչեւ Սօֆիա:

Նաչէվիչ կը բանակցի Գրան հետ գաղթականներու մասին, Գրանը ապստամբ ոյժերու ներս խուժումէն վախնալով կը զժկամա կի ընդունիլ, իսկ գաղթականները գեւասարսպներու ազդեցութեան տակ չեն ուզեր վերադառնալ, մինչեւ որ Մակեդոնիոյ մէջ չի հաստատուի քրիստոնեայ կառավարիչ մը:

— Տէմիրքաբուի մօտ թիւրք զինուորները նորէն անցան Պուլկարոյ սահմանը. Կառավարութիւնը շուտով զօրք փոխադրեց Սօֆիայէն:

— Պուլկար կառավարութիւնը խստիւ կերպով բողոքեց իր սահմաններու բռնաբարման դէմ. Ուլիթանը խոստացած է յանցաւորները պատժել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Անգլիոյ զեսպանը յիշատակող գիր մը շրկեց Գրանը, որու մէջ նա կը պահանջէ Պերլինի դաշնագրի բոլոր յօդուածները գործադրել. մանաւանդ Հայաստանին Մակեդոնիոյ վերաբերեալ 61րդ և 21րդ յօդուածները. Ասէ զատ զեսպանը կը պահանջէ փակել թրքական նեղուցները:

— Սուլթանի շորթորդ մանչը, եօթներորդ որդին Մուհամմէտ Պուրհանէտին մեռաւ Կ. Պոլսոյ մէջ. Օ. Տառսը հօրը:

ՄԱԿԵՂՈՒՍ
Սէլանիկէն «Խան»-ին կը հեռագրեն, որ Սարաֆով և ուրիշ խմբապետներ հաւաքուած էին գիւղի մը մէջ և յանկարծ թիւրք զինուորներէ յարձակում կրելով «պաննոսեցան». Մենք այս լուրին ստուգութեանը վրայ կը կասկածինք և արդէն պուլկար թերթի կը յայտարարեն որ միանշարժ Սարաֆով անուն ուրիշ մարդ մըն է:

— Հրատարակուեցաւ անգլիական կապոյտ գիրքը, որ կէ յայտնի կըլլայ Յիթ՝ արտաքին գործւց նախարար՝ մարքիզ Լաստաուն միջամտած է Մուրցչիլէկ վեհապետական խորհրդին մէջ և ըրած հետեւեալ առաջարկները.

Ըլլալ գործնական և ճնշում բանեցնել Թուրքիոյ վրայ.

Բարենորոգումները գնել լայն հիմերու վրայ.

Նշանակել քրիստոնեայ կառավարիչ մը, կամ դոնէ մահմեւականի մը տալ քրիստոնեայ խորհրդակները.

Շուտով Մակեդոնիա զրկել Եւրոպացի սպաներ ոստիկանութիւնը կազմակերպելու համար. Երկու պետութիւնները յայտնած են իրենց զոհունակութիւնը, անսնելով որ Անգլիոյ նախարարը իրենց հետ համակարծիք է:

— Ռուսիոյ և Աւստրիոյ զեսպանները կը պատրաստեն բարենորոգմանց նոր ձրագիրը և այս շարժու պիտի առաջարկեն Սուլթանին:

— Իրենց հայրենիքը վերագործող Մակեդոնացիներէն 250 հոգի աքսորուեցան Փոքր-Ասիա:

ՌՈՒՍԻԱ

Բէքինի ուսուցիչները չինական կառավարութեան յիշատակագիր մը ուղղած է, որով կը յայտնէ թէ Ռուսիա Մանչուրիոյ պարպուիլը պիտի յետաձգէ եթէ չկատարուին իր պահանջները:

— Ռուս մամուլը և պաշտօնական կարեւոր անձինք յարմար կը գտան ճարտիւյ հետ խընդիրը խաղաղութեամբ կարգադրել, որովհետեւ անոնք կը կարծեն թէ պատերազմը մեծ վնասներ պիտի հասցնէ Ռուսիոյ և ներքին ուժը ղլատէ, մինչդեռ Ռուսիա իր ունեցած երկէրները բարեկարգելու այնքան պէտք ունի:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Педатница, Взаимность «Варна